

ՌՈՒՄԱՆԱՑԻ ՀԱՅԱԳԵՏ ՊՐՈՖ. ՎԼԱԴ ԲԸՆԸՑԵԱՆՈՒԻ  
ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ



Ռումանահայ գաղութը և հայագիտությունը պրոֆ. Վլադ Բընցեանուի մահով ծանր կորուստ կրեցին:

Հայ ժողովուրդի մեծ բարեկամին մահը սույն մատնեց իր մերձավորները, բարեկամներն ու ծանոթները, որոնք զինքը սիրեցին իր մարդկային առաքինություններուն և գիտնականի բարձր արժանիքներուն համար:

Հանգուցյալի ի կենդանության հայտնած փափակին և իր ընտանիքի խնդրանքին ընդուազելով, թաղման կարգը կատարվեցավ հայ եկեղեցիին մեջ, իսկ թաղումը՝ հայկական գերեզմանատունուն:

Վլադ Բընցեանուի մահը թուխարեստի հայության համար եղավ սույն օր մը և ան խուռն բազմությամբ ներկա եղավ հուզարկավորության՝ հարգանքի իր տուրքը մատու-

ցանելու համար իր մեծ բարեկամի հիշատակին:

Թաղման արարողության նախագահեց Ռումանիո հայոց թեմի առաջնորդ Հոգեշնորդ Տ. Տիրայր վարդապետ Մարտիլյան:

Դամբանականներ խոսեցան առաջնորդ հայոց սուրբը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի, Էջմիածնի Գերագույն Հոգեմոր Խորհուրդի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միարանության և Ռումանիո հայ համայնքի անունվ, գոկտ. Գրիգոր Փամբուքճյան՝ Ռումանիո հայոց թեմական խորհուրդի, Միհայիլ Գուրօղլու՝ Արևելագիտական ընկերության, Երվանդ Մելիտոն՝ Թուխարեստի հայ համայնքի, Տիգրան Տեր-Գրիգորյան՝ Շնորհ կյանք թերթի խմբագրության, Հ. Ճ. Սիրոմի՝ իր աշխատակիցներուն և բարեկամներուն կողմեց, հանգուցյալի համալսարանական պաշտոնակիցներեն մին և անոր դասընթացներուն հետեւող ուսանող մը:

Առաջնորդ հայոց սուրբը իր դամբանականին մեջ վեր հանեց արժանիքները հանգուցյալին, որ ոչ միայն զրադեցավ հայ ժողովուրդի մշակութային անցյալով, այլ սիրեց հայ ազգը հարազատի մը պես ու եղավ գրեթե հայ մը:

Թուրք դամբանախոսները ընդգծեցին Վ. Բընցեանուի գիտնականի թանկագին ծառայություններն ու արժանիքները, որոնցմով ան արժանացած էր ընդհանուրի հարգանքին:

Հանգուցյալի մտերիմ բարեկամ Հ. Ճ. Սիրոնի զամբանականին մեջ ի միջի այլոց ըսավ:

«Թանկագին բարեկամ, քեզի հետ ժամադրություն տված էինք ճիշտ այսօր. պիտի գայի ողջերթ մաղթելու քեզի՝ Հայաստան մեկնելու առթիվ: Ճակատագիրը ուրիշ կերպ էր տնօրիներ, ավա՞զ: Եկեր եմ ճամբելու շատ հեռավոր աշխարհ մը, ուրկե երրեք դարձ կա, մինչ անդին, Երևանի բարեկամներդ անձկությամբ կսպասեն քեզի այս պահուստ:

Մեր վերջին հանդիպման պահուն, քանի մը օր առաջ, կըսեիր, թե կարուտցած ես Հայաստանը, կուզես անգամ մըն ալ ողջունել Մա-



Պրոֆ. Վլադ Բընըցեանուի դագաղը շրջապատված նուղարկավորներով

սիսն ու էջմիածինը, անգամ մըն ալ տեսնել  
Հայ ժողովուրդը իր ճիզերուն մեջ: Ի՞նչ  
փուլթ, թե կաղդուրի պետք ունեիր: Հայոց  
աշխարհը ուժ և ավել պիտի տար քեզի:

Քու ուսուցիչներդ՝ Անտուան Մեյեն և Ֆրե-  
դերիկ Մակլերն ալ զբաղեր էին Հայ ժողո-  
վուրդով և Հայ լեզվով, բայց քուկդ գիտնա-  
կանի հետաքրքրութենեն շատ անդին անցավ:  
Դուն հոգվով ալ շիման մեջ մտար Հայ ժո-  
ղովուրդին հետ, ապրեցար անոր հոգերով:  
Դուն արժանի եղար քու ուսուցիչներուդ:

Դուն նույնացար Հայ ժողովուրդին հետ,  
Հայ համարեցիր քեզ ու հարազատի մը պիս  
ոգերվեցար անոր վերելքով: Ու Հայ ժողո-  
վուրդն ալ քեզ իրը նկատեց: Ու վերջապես  
եկար Հայ մեռելներուն հետ միասին հանգչե-  
լու ցուրտ հողին տակ ալ: Եթե հոգիդ զգար  
ինչ որ այս պահուա տեղի կունենա դագաղիդ

շուրջը, ավելի խաղաղ պիտի քնանար հա-  
վիտենական քունը»:

Պրոֆ.-դոկտ. Վլադ Բընըցեանու իր խան-  
դավառությամբ ու մարդկային վերաբեր-  
ություն գրաված էր բոլորի սիրտն ու հա-  
մակրանքը: Իր հարատես շանքերուն շնորհիվ  
կարելի եղավ հիմնել Արևելյան ուսումնասի-  
րություններու ընկերությունը, որ իր շուրջը  
համախմբած է 40 հետազոտողներ:

Վ. Բընըցեանու մահացավ իր ուժերու  
ծաղկման շրջանին, երբ ինք նվիրված էր ա-  
վելի ինր ուսումնասիրություններու, մասնա-  
գիտական բնագավառներու մեջ:

Մաղթենք, որ իր գործը շարունակողներ  
հանդիս գան Ռումանիո մշակութային աշ-  
խարհին մեջ ու հավերժացնեն իր հիշատակը  
կենցանի գործերով:

ԹՂԹԱԿԻՑ

